

Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքը արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.


Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



ԿԸՊՈՒՑՄԱՆ ՀԱՇԹՎ

ԽԵՎԱՆԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՅԵՐԵՎԱՆ 1932

ԱՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԽԵՎԱՆԻ ԱՐԱՐԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

511(075)

ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՇԻՎ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ԱԾԽԱՏԱՆՔԻ ԳԻՐՔ

ՈՒՍՄԱՆ Բ. ՏԱՐԻ

ԿԱԶՄԵՑԻՆ

Ա. ՇԱԿԱՐՃՅԱՆ
Լ. ՎԱՐԱՆԴՅԱՆ
Հ. ՔՈԶԱՐՅԱՆ



ՊԵՏԱՐԱՏ • ՈՒՍՄԱՆԿՐԱՏԲԱԺԻՆ
1932 • ՅԵՐԵՎԱՆ

Այս գրքի մասին ունեցած
դիտողությունները ուղարկեր՝
— Յերևան, Բաժմի № 29,
Ուսմանկիրատքամին:

Ա. Ռ. Ա. Զ. Ա. Բ. Ա. Ն

«Կառուցման հաշվի» Բ. տարվա աշխատանքի այս գիրքը, վոր ընդ-
գրկում ե 100-ի և 1000-ի թվաշրջանները, կազմված ե համաձայն Լուս-
ժողկոմատի 1932 թ. ծրագրի, Յելելով մի կողմից յերեխաներին մաթեմա-
տիկական ունակություններ տալու և մյուս կողմից մեր սոցիալիստական
շինարարության տարբեր բնագավառների թվական փոխհարաբերություն-
ներին ծանոթացնելու նպատակից, կարենոր տեղ ե հատկացված ինչպես
հաշվային վարժություններին, այնպես և խնդիրներին ու պոլիտեխնիկա-
կան-կառուցողական աշխատանքներին, և մք ունենալով յերեխաների տա-
րեքային պահանջներն ու հնարավորությունները, հաշվային նյութերին
հյուսված են ծրագրով նախատեսնված յերկրաչափական նյութերը, կապե-
լով չափումների և այլ աշխատանքների հետ:

Զանազան գիտելիքների լուրացումը հեշտացնելու համար տեղ ե
տրված նկարների ու գծագրների:

Այս գիրքը կազմելիս վորոշ չափով ոգտված ե Վոլգինի, Կոզլովայի և
մյուսների «Число на стройке II год математики в городской школе
(1931 թ.) գաղաքարքերից:

Կազմողներ

Մայիս, 1932 թ.



11-2625681

ՉՈՐՍ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ 100-Ի ՏՐՁԱՆՈՒՄ

ԳՈՒՄԱՐՈՒՄ ՅԵՎ ՀԱՆՈՒՄ

ԿՐԿՆՈՒԹՅՈՒՆ

1. Տասնյակներով կապեք լուցկիները և մի-մի տասնյակ ավելացնելով՝ համրեք մինչև 100:

2. Լուցկիները մի-մի տասնյակ պակասեցնելով լետ համրեք մինչև 10:

3. Մեկ-մեկ համրեք 100 լուցկի:

4. 100 լուցկին մեկ-մեկ լետ համրեք:

5. Կարդացեք այս թվերը՝ 30, 50, 20, 60, 90, 70, 40, 80, 100:

6. Կարդացեք այս թվերը՝ 47, 65, 84, 71, 97, 58:

7. Բաց արեք ձեր դաստղը 42, 27, 39, 54 լեռնոր:

8. Կարգով զրեցեք.

36-ից մինչև 45

78-ից » 90

68-ից » 75

9. Տետրում գծեք լերկու շարք 8-ական քառակուրի, ինչպես այստեղ ե, և առաջին քառակուրիների մեջ նշանակելով 57 և 85, շարունակեք կարգով զրել հաջորդող թվերը:

57	<input type="checkbox"/>							
----	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------

85	<input type="checkbox"/>							
----	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------	--------------------------

10. Մեկ-մեկ լետ համրեք և զրեք, սկսելով

67-ից մինչև 54

54-ից » 38

91-ից » 79

11. Հաշվեք բանալոր:

$$20 + 30 \quad 70 - 30 \quad 80 - 40 + 20$$

$$40 + 30 \quad 50 + 50 \quad 30 + 50 - 40$$

$$60 + 20 \quad 60 + 40 \quad 100 - 30 - 30$$

$$80 + 30 \quad 30 - 40 \quad 100 - 10 - 50$$

12. Հաշվեք գրավոր.

$$\begin{array}{rcl} 60 + 20 & 50 + 20 = 30 \\ 50 + 40 & 10 + 80 = 60 \\ 90 - 20 & 40 + 40 = 50 \\ 70 - 40 & 70 - 50 + 40 \end{array}$$

13. Մետրի վրա ցույց տվեք—43 սանտիմետր, 54, 62, 75
սանտիմետր:

14. Գրատախտակի վրա գծեք—38 սանտիմետր, 56 սանտի-
մետր:

15. Համրիչի վրա զցեք.

$$\begin{array}{rcl} 30 + 5 & 27 - 7 \\ 40 + 7 & 58 - 8 \\ 80 + 9 & 67 - 7 \\ 90 + 6 & 75 - 5 \end{array}$$

16. Կորեք մի շերտ թուղթ 30 և մեկ ուրիշը՝ 8 սանտիմետր
լեռկարության, միասին վհրքան կլինի այդ 2 շերտերի լեռկարու-
թունը:

17. Կորեք մի շերտ թուղթ 35 սանտիմետր լեռկարության-
դրանից կտրեցեք 5 սանտիմետրը, վհրքան մնաց:

18. Հաշվեք բանավոր.

$$\begin{array}{rcl} 40 + 7 & 74 - 4 \\ 70 + 4 & 98 - 8 \\ 50 + 3 & 47 - 7 \\ 80 + 2 & 53 - 3 \end{array}$$

19. Հաշվեք գրավոր.

$$\begin{array}{rcl} 30 + 8 & 45 - 5 \\ 60 + 4 & 79 - 9 \\ 90 + 6 & 93 - 3 \\ 70 + 7 & 58 - 8 \end{array}$$

20. Արկղի կամ տուփի մեջ լցրեք 24 լոբի, ավելացրեք դար-
ձյալ 3-ը: Քանիսը լեղավ, ստուգեցեք:

21. Ալժմ 27 լոբուց վերցրեք 5-ը: Քանիսը մնաց, ստու-
գեցեք:

22. Առեք ձեռներդ 32 մատիտ, վերցրեք դարձյալ 6-ը, ապա
լեռ դրեք 5-ը: Քանի մատիտ մնաց ձեր ձեռքում:

23. Համրիչի վրա գցեք.

$$\begin{array}{rcl} 21 + 1 & 36 - 2 \\ 34 + 3 & 58 - 5 \\ 45 + 4 & 37 - 6 \\ 51 + 6 & 95 - 3 \end{array}$$

24. Հաշվեք բանավոր.

$$\begin{array}{rcl} 73 + 6 & 67 - 6 & 45 + 3 & 85 - 4 \\ 44 + 5 & 47 - 5 & 55 + 4 & 97 - 4 \\ 93 + 3 & 68 - 7 & 65 + 2 & 76 - 3 \\ 81 + 7 & 79 - 4 & 75 + 3 & 49 - 8 \end{array}$$

$$42 + x = 47$$

Այս որինակը կարդացեք այսպես. Ի՞նչ թիվ ավելացնենք (կամ
գումարենք) 42-ին, վոր դառնա 47:

x նշանը գրվում է անհայտ թվի փոխարեն:

25. Գտեք անհայտ թիվը.

$$\begin{array}{ll} x - 7 = 62 & x - 4 = 54 \\ x - 6 = 51 & x - 7 = 61 \\ x - 3 = 75 & x - 8 = 70 \\ x - 4 = 93 & x - 2 = 46 \end{array}$$

26. Քաղաքի մի դպրոցի Ա խմբում տարեսկզբին կար 33 ա-
շակերտ, հետո ավելացավ 6-ը: Այդ խմբում տարվա վերջին քանի
աշակերտ կար, յեթե հիվանդության և ուրիշ վարեր տեղափոխ-
վելու պատճառով տարվա ընթացքում հեռացան 4-ը:

27. Յերրորդ և չորրորդ խմբերի լեռեխաներն եքսկուրսիայի
գնացին գործարան: Յերրորդ խմբից մասնակցում եր 37 աշակերտ,
իսկ չորրորդից՝ 5-ով պակաս: Ընդամենը քանիս եր չորրորդ խմբի
աշակերտների թիվը, յեթե եքսկուրսիայից բացակա յեր 8-ը:

28. Մի կոլանտեսություն իր բանջարանոցից հավաքեց ա-
ռաջին անգամ 62 կողով պամիզոր, իսկ յերկրորդ անգամ՝ 7 կողո-
վով ավելի վերջին հավաքածից՝ 6 կողովը թթվի համար եր քա-
նիսն եր լեփելու:

29. Համբիչի վրա զցեք 48, ավելացրեք 2-ը: Քանի՞ս սեղավ:
 30. Տուփի մեջ դրեք 50 լուցկի, հանեք 2-ը: Քանի՞ս մնաց:
 31. Հաշվեք բանավոր.

$9 + 1$	$8 + 2$	$6 + 4$
$19 + 1$	$28 + 2$	$16 + 4$
$29 + 1$	$48 + 2$	$46 + 4$
$39 + 1$	$58 + 2$	$66 + 4$
$10 - 1$	$10 - 2$	$10 - 4$
$20 - 1$	$30 - 2$	$30 - 4$
$40 - 1$	$50 - 2$	$40 - 4$
$60 - 1$	$70 - 2$	$70 - 4$
32. $4 + 6$	$2 + 8$	$5 + 5$
$24 + 6$	$32 + 8$	$25 + 5$
$74 + 6$	$52 + 8$	$45 + 5$
$54 + 6$	$72 + 8$	$65 + 5$
$10 - 6$	$10 - 8$	$10 - 5$
$60 - 6$	$20 - 8$	$40 - 5$
$70 - 6$	$50 - 8$	$70 - 5$
$90 - 6$	$80 - 8$	$80 - 5$

33. Մի տասնորդակում արհեստանոցում պատրաստեցին 30 աթոռ և 8-ով պակաս սեղան: Քանի՞ աթոռ ու սեղան պատրաստեցին:

34. Դպրոցի հողամասում Ա խմբի աշակերտներից աշխատում եր 24-ը, ԱԱ խմբից՝ 6-ով ավելի, իսկ ԱԿ խմբից 20: Քանի՞ աշակերտ եր աշխատում այդ հողամասում:

35. Հաշվեք բանավոր.



$7 + 3$	$3 + 7$	$1 + 9$
$17 + 3$	$13 + 7$	$21 + 9$
$37 + 3$	$43 + 7$	$51 + 9$
$57 + 3$	$73 + 7$	$81 + 9$

$10 - 3$	$10 - 7$	$10 - 9$
$20 - 3$	$50 - 7$	$30 - 9$
$40 - 3$	$70 - 7$	$90 - 9$
$70 - 3$	$80 - 7$	$70 - 9$


36. Հաշվեցեք պրավոր.

$26 + 4$	$30 - 8$
$32 + 8$	$50 - 6$
$55 + 5$	$70 - 9$
$71 + 9$	$40 - 7$
$34 + 6$	$60 - 4$
$63 + 7$	$80 - 5$

37. Տետրերի մեջ զծեք ներքեւի ձևով և դատարկ քառակումներում զրեք մի-մի անպիսի թիվ, վոր գումարելով կողքի թվի հետ սուսացվի լրիվ տասնյակներ:



38.



Եթե այս դրամով տոնենք նկարված պիտույքներից մեկն ու մեկը վնասան դրամ կմնա, ինչպես կզրեք:



39. Կոլլերիտ դպրոցի բանջարանոցում կար 45 խնձորենի, 5-ով ավելի տանձենի, իսկ սրանից ել 40-ով ավելի ծիրանի: Քանի՞ ծիրանի ծառ կար այդտեղ:

40. Բաժակն արժե 25 կոպեկ, իսկ բաժակակալը՝ 5 կոպեկով ավելի: Մեկ բաժակակալ գնելու գեղքում ինչքան դրամ է ետ կոստացվի, եթե վճարվի 2 քսան կոպեկանոց:

41. Խըճիթ-ընթերցարանի համար գնեցին Լենինի նկարը, վորի լերկարությունն եր 50 սանտիմետր, իսկ լայնությունը՝ 8 սանտիմետրով պակաս: Վորքան եր այդ նկարի լայնությունը:


Մետրական քանոնով գծեցեք գրտաթխտակի վրա և ցույց տվեք այդ նկարի մեծությունը:

42. Կոռպերատիվում 1 կտոր ձեռքի ստպոնը վաճառվում եր 47 կոպեկով, իսկ լվացքինը՝ 7 կոպեկով պակաս: Մի կտոր լվացքի ստպոն գնելիս 1 ռուբլիանոց տալով, վորքան դրամ իւտ կատացվի:



Այս նկարի ձևով տասնյակներով կապեք ձողիկներ և գումարեցեք: Վորքան լեզավ:

43. Մի կողմում դրեք 3 տասնյակ և 6 լուցկի, մյուսում՝ 5 տասնյակ: Վորքան լեզավ:



Մեծ ողերը ցույց են տալիս տասնյակները, փոքրերը՝ միավորները:

Այդ ողերն արտահայտեք թվանշաններով:

44. Հաշվեք բանավոր.

43 + 30	32 + 60
72 + 20	41 + 40
57 + 40	24 + 70
25 + 50	56 + 30

45. Գրեք նման մի քանի որինակներ և դրանց պատասխանը:

46. Լուցկու 6 դատարկ տուփերի մեջ դրեք մի-մի տասնյակ լուցկի, իսկ 1 տուփի մեջ՝ 4 հատ: Անջատեցեք 3 տասնյակը: Ի՞նչքան մնաց:

47. Ներքեմի մեծ ողերից 3-ի միջից տարված են գծեր: Դանշանակում ե «3 տասնյակը հանած»:



Այս մեծ ու փոքր ողերով կատարած հանումը դրեք թվանը-շաններով:

48. Հաշվեք բանավոր.

34 - 20	95 - 30	41 - 30 + 20
45 - 30	76 - 50	53 + 40 - 50
62 - 20	93 - 40	48 - 40 + 30
74 - 40	68 - 20	26 + 60 - 40

49. Իմացեք անհայտ թիվը և տետրում գրեք չ-ի փոխարեն:

$$\begin{array}{ll} x - 40 = 37 & x + 30 = 85 \\ x - 60 = 14 & x + 20 = 58 \\ x - 30 = 42 & x + 40 = 79 \\ x - 50 = 23 & x + 60 = 94 \end{array}$$

50. Փողոցը կանոնավորելու համար առաջին որն աշխատանքի անցավ 28, յերկրորդ որը՝ 30 բանվոր, իսկ յերրորդ որը նախկին 2 որվա բանվորներից 20-ով պակաս: Բանի՞ բանվոր աշխատեց յերրորդ որը:

51. Մի նոր շենքի համար զանազան շինանյութեր ելին պատրաստել, ընդամենը 92 ֆուրդոն քար՝ 60 ֆուրդոն, ավագ՝ 20 ֆուրդոն, մնացածն ել կիր ու ցեմենտ։ Քանի ֆուրդոն եր կիրն ու ցեմենտը։

52. Կոլերիտ դպրոցի աշակերտներն աշխատանքի գնացին կոլտնտեսության ազդիները. առաջին խմբից մասնակցում եր 30, յերկրորդ խմբից՝ 6-ով ավելի, իսկ յերրորդ խմբից 20 աշակերտ։ Քանի աշակերտ եր դուրս իմել հասարակական աշխատանքի։


Ո Ի Ղ Ի Ղ Գ Ի Ծ

53. Քանոնը դրեք գրատախտակի վրա և գծեք կտվիճով։ Ստացվեց ուղիղ գիծ։

Քանոնի ոգնությամբ տետրում մատիտով գծեք ուղիղ գիծ։

Տետրի տողերն ինչպիսի գծեր են։

54. Դասարանում—հատակի, սեղանի, գրատախտակի վրա ցուց տվեք ուղիղ գծեր։



55. Հարթ տարածության վրա ամրացրեք 2 ձող իրարից 5 մետր հեռավորությամբ։ Այդ ձողերի միջև անցկացրեք մի ուղիղ և մի կոր գիծ այսպես։




Այս գծերից վերն ե ավելի կարճ։

56. Գրուղի և քաղաքի միջև ընկած ե յերկու ճանապարհ, մեկն ուղիղ գծով՝ մարդկանց համար, իսկ մյուսը՝ վոլորտապուլու կառքերի համար։ Վոտքով գնալու դեպքու չ կը ճանապարհով ամեւ շատ տաղ կհասնենք։

57. Գետնի վրա իրարից մի-մի մետր հեռավորությամբ ամ-

րացրեք 3 ձող. ձեզնից մեկը թող նալի, իսկ մյուսն ուղղի ձողերն ախպես, վոր դրանք լինեն մի ուղիղ գծի վրա, այսպես։




58. Առու փորելու համար ինչպես պետք է ուղիղ գիծ անց կացնել գետնի վրա։

ԶՈՒԳԱՀԵՌ ԳԾԵՐ

59. Քանոնը դրեք գրատախտակին և յերկու կողմից գծեք կտվիճով։

Նույն աշխատանքը կատարեք տետրում մատիտով։

Մի քնակ տեղ չափեք այդ 2 գծերի հեռավորությունը միմյանցից։ Ի՞նչ նկատեցիք։



Այս գծերը զուգահեռ են։

60. Դասարանում ցուց տվեք զուգահեռ գծեր։

61. Դրսում ցուց տվեք զուգահեռ գծեր։

62. Ի՞նչպիսի գծերով կարտահայտեք կառքի անխվների թողած հետքը, յերկաթղիծը։

63. Գետնի վրա, ապա տետրում գծեք զանազան լերկարության ու լանության զուգահեռ գծեր։



64. Այս գծերը զուգահեռ են, թե՞ վոչ։ Ի՞նչու այս գծերը զուգահեռ չեն։

Այս 2 գծերից վերն ե թե՞։

65. Վերցրեք 2 մատիտ և դասավորեք այնպես, վոր մի դեպքում դրանց ուղղությունը լինի զուգահեռ, մյուս դեպքում՝ վոչ զուգահեռ.

66. Կազմենք մեր խմբի աշակերտաների հաճախումների աղյուսակն այսպիս:

ԱՆՈՒՆ-ԱԶ- ԳԱՆՈՒՆ	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22	23	24	25	26	27	28	29	30	31
1.																															
2.																															
3.																															
4.																															
5.																															


67. Կազմենք բացակալությունների գիազրամը.

ԱՆՈՒՆ-ԱԶԳԱՆՈՒՆ	Բացակայած ուժեր							
	1	2	3	4	5	6	7	8
1. Ազատան Ռուբեն								
2. Բալյան Վահան								
3. Գևորգյան Աշխեն								
4. Դավթյան Հայկ								
5. Զաքոբյան Նելլի								


68. Նույն ձեռվ կազմեք ձեր խմբի հոկտեմբեր տամսի բացակալությունների գիազրամը:

69. Համբիչի վրա դցեք.

$$\begin{array}{r} 26 + 12 \\ 32 + 25 \\ 43 + 44 \\ 75 + 22 \end{array} \quad \begin{array}{r} 95 - 42 \\ 79 - 53 \\ 87 - 36 \\ 66 - 54 \end{array}$$



Ի՞նչ են արտահայտում վերևի մեծ ու փոքր ողերը. գրեցեք թվանշաններով:



Ի՞նչ են արտահայտում տարր ողերը. գրեք թվանշաններով:

70. Հաշվեք բանավոր.

$$\begin{array}{r} 25 + 22 \\ 36 + 23 \\ 45 + 34 \\ 46 + 42 \end{array} \quad \begin{array}{r} 47 - 22 \\ 59 - 23 \\ 79 - 34 \\ 83 - 42 \end{array} \quad \begin{array}{r} 58 + 31 \\ 65 + 24 \\ 37 + 42 \\ 96 - 63 \end{array}$$

71. Հաշվեք գրավոր:

$$\begin{array}{r} 44 + 12 = 15 \\ 23 + 55 = 14 \\ 64 + 32 = 63 \\ 16 + 42 = 25 \end{array} \quad \begin{array}{r} 76 - 41 = 20 \\ 68 - 34 = 12 \\ 85 - 52 = 35 \\ 94 - 62 = 17 \end{array}$$

72. Իմացեք անհայտ թիվը և տետրում գրեք x -ի փոխարեն.

$$\begin{array}{lll} 53 + x = 88 & x - 35 = 41 & 77 - x = 43 \\ 64 + x = 86 & x - 24 = 53 & 88 - x = 54 \\ x + 37 = 89 & x - 45 = 23 & 65 - x = 32 \\ x + 46 = 97 & x - 57 = 32 & 96 - x = 64 \end{array}$$

73. Քաղաքի կայարանում մի վագոնից ցած բերին


$$\begin{array}{rcl} \text{լաղող} & - & 23 \text{ կողով} \\ \text{տանձ ու խնձոր} & 32 & \text{»} \\ \hline \text{դեղձ} & x & \text{»} \\ \hline \text{Բնդամենը} & 96 \text{ կողով.} & \end{array}$$

Քանի կողով եր դեղձ:

Մեծ ծանրություններ չափելու համար գործածում են մի չափ, վորին ասում են ցենսեր:

Ցենտները 100 կիլոգրամ են:

Մի ամբողջ և կես պարկ ցորենը մոտավորապես 1 ցենտներ քաշ ունի:




74. Յերկու կոլտնտեսություն սոցմրցում հալտարաբեցին իրար. մեկը խոստացավ պետությանը տալ 44 ցենտներ, իսկ մյուսը՝ 53 ցենտներ հացահատիկ. Առաջինը տվեց 56 ցենտներ, իսկ յերկ-

րորդը՝ 59 ցենտներ. Այդ կոլտնտեսությունները խոստացածից քանի ցենտներ ավելի հացահատիկ տվին:

75. Մի Խորհրդավին անտեսություն իր բանջարանոցից ստացավ 76 ցենտներ կարտոֆիլ, դրանից 14 ցենտներ պակաս կաղամբ և սրանից ել 21 ցենտներ պակաս գազար. Քանի ցենտներ գազար ստացվեց այդ խորհրդավին տնտեսությունից:


76. Դպրոցից մինչև խրճիթ-ընթերցարանը 32 մետր եր, անտեղից մինչև կոռպերատիվը՝ 23 մետր. Վճռքան եր հեռավորությունը կոռպերատիվից մինչև գյուղխորհուրդ, յեթե դպրոցից մինչև գյուղխորհուրդ 98 մետր եր:

77. Աշակերտը զրախանութից գնեց 1 տուփ գունավոր մատիաներ, վորոնց տվեց 34 կոպեկ, 1 մետրական քանոն՝ 23 կոպեկ և մի կարկին: Նա վճարեց 1 ոռոքի և լետ ստացավ 10 կոպեկ: Ի՞նչ արժեք կարկինը:



Այս նկարմ տասնյակ և միավոր լուցկիներն արտահայտեք ողերով, ապա թվանշաններով:

78. Ներքեմի ողերն արտահայտեք թվանշաններով.



79. Հաշվեք բանավոր:

$$\begin{array}{rcl} 45 + 15 & 36 + 24 \\ 24 + 16 & 54 + 36 \\ 33 + 17 & 100 - 43 \\ 43 + 18 & 90 - 12 \end{array}$$

$$\begin{array}{ccc} 60 - 15 & 70 - 24 & 80 - 34 \\ 40 - 16 & 90 - 34 & 70 - 31 \\ 50 - 17 & 80 - 57 & 90 - 27 \\ 70 - 18 & 60 - 43 & 60 - 18 \end{array}$$

$$\begin{array}{lll}
 80 + 37 & 47 + 23 & 78 + 12 \\
 37 + 43 & 46 + 14 & 64 + 26 \\
 25 + 45 & 57 + 23 & 35 + 25 \\
 25 + 55 & 36 + 44 & 28 + 22
 \end{array}$$

81. Գրեք և հաշվեք.

$$\begin{array}{lll}
 26 + 34 & 80 - 22 & 41 + 19 \\
 36 + 44 & 90 - 45 & 37 + 43 \\
 53 + 17 & 80 - 36 & 50 - 32 \\
 56 + 24 & 70 - 56 & 90 - 46
 \end{array}$$

ԽԱ.՝ «ԼՐԱՋԵԼ 100-Ր».

Խաղին մասնակցում են լեռկուտական աշակերտ: Նրանցից մեկն ասում է 100-ից փոքր մի թիվ, մյուսը պետք է ասի այն թիվը, վորով լրանում է 100-ը. որինակ, լեռը մեկն ասում է «58», մյուսը պետք է պատասխանի «42», վոր լրացնի 100-ը:

82. Տեսրերում զծազրեք ուղղանկյուններ, ինչպես տեսնում եք ներքեում: Այդ ուղղանկյունները բաժանեցեք 2 մասի: ձախ վանդակում զրեք այստեղ նշանակված թվերը, իսկ աջ վանդակում այն թիվը, վորով կլրանա 100-ը:

36		71		57		65	
26		37		51		82	
76		45		91		16	
85		28		48		63	

83. Գտեք անհայտ թիվը և տեսրում գրեք ա-ի փոխարեն:

$$\begin{array}{lll}
 100 - x = 36 & x + 48 = 100 \\
 100 - x = 72 & x + 74 = 100 \\
 100 - x = 65 & x + 37 = 100 \\
 100 - x = 83 & x + 42 = 100
 \end{array}$$

84. Աշխատանքի սենյակում աշակերտները կավից պտուղներ ենին պատրաստում: տանձերի թիվը 24 եր, խնձորներինը՝ նույնքան, իսկ տանձերից ու խնձորներից 16-ով պակաս նուռ: Քանի պտուղ պատրաստեցին:

85. Արհեստանոցում պատրաստեցին սեղաններ, աթոռներ և արկղեր, ընդամենը 78 հատ: Սեղանների թիվը 15 եր, աթոռներինը՝ 14-ով ավելի, մնացածն ել արկղեր: Քանի արկղ պատրաստվեց:

86. Խրճիթ - ընթերցարանը քաղաքից ստացավ 89 ոռոքու զրքեր և ուրիշ նույնթեր:

$$\begin{array}{ll}
 \text{զրքեր} & \dots \quad 37 \text{ ո.} \\
 \text{նկարներ} & \dots \quad 21 \text{ ո.} \\
 \text{պլակատներ} & \dots \quad 12 \text{ ո.} \\
 \text{քարտեզներ} & \dots \quad x
 \end{array}$$

Ի՞նչ եր քարտեզների արժեքը:

87. Մետրական քանոնի վրա ցուց տվեք 10 սանտիմետր: Քանոնի ոգնությամբ այդ լեռկարությունը զծեք տեսրում:



10 սանտիմետր 1 դեցիմետր է:

88. Քանի դեցիմետր ե 20 սանտիմետր, 50, 60 սանտիմետր:

89. Զափեք ձեր տեսրը. քանի դեցիմետր և սանտիմետր ե դրա լեռկարությունը, լայնությունը, նշանակեցեք այդ:

90. Զափեք ձեր մատիտը, գրչակոթը, նկարչության տեսրը, մետրական քանոնը—քանի դեցիմետր և քանի սանտիմետր ե լուրքաբանչութը:

91. Քանի՞ դեցիմետր ե

27 սանտիմետրը և 23 սանտիմետրը

$$45 \quad \text{»} \quad \text{»} \quad 35 \quad \text{»}$$

$$16 \quad \text{»} \quad \text{»} \quad 54 \quad \text{»}$$

$$58 \quad \text{»} \quad \text{»} \quad 42 \quad \text{»}$$

Ստուգեցեք մետրական քանոնով կամ մետրական ժապավենով:

92. Առեք 26 լուցկի. ավելացրեք դրան 7-ը:

Հաշվեք այսպես. նախ քանիսն ավելացնենք 26-ին, վոր դառնա լրիվ 3 տասնյակ կամ 30. դարձյալ քանիսն ավելացնենք, զնուքան ստացաք:

93. Նույն ձևով 34 լուցկուն գումարեցեք 8-ը, 28-ին 5-ը, 66-ին 9-ը, ի՞նչքան ստացաք:

94. Տուփի մեջ դրեք 36 լուցկի. դրանից հանեք 9-ը, այսպես նախ 36-ից հանեք 6-ը, ապա 3-ը:

95. Նույն ձևով 25 լուցկուց վերցրեք 7-ը, 52-ից 6-ը, 63-ից 8-ը. ի՞նչքան ստացաք:

$$\bigcirc \bigcirc \bigcirc \circ \circ \circ \circ + \bigcirc \bigcirc \circ \circ \circ =$$

Հիշեցեք, թե քանի՞ միտվորը 1 տասնյակ ե:

Միտվոր ողերը միացնելով քանի՞ տասնյակ կստացվի և քանի՞ միտվոր ել կմնա:

Վերևի ողերը միացնելով ի՞նչ կստացվի. Արտահայտեցեք դա նախ մեծ ու փոքր ողերով, ապա թվանշաններով:

96. Հաշվեք բանավոր.

$$28 + 6 \quad 34 - 6 \quad 45 + 7 \quad 54 - 7$$

$$36 + 7 \quad 45 - 7 \quad 17 + 7 \quad 92 - 7$$

$$47 + 8 \quad 63 - 8 \quad 68 + 7 \quad 36 - 7$$

$$58 + 9 \quad 76 - 9 \quad 35 + 7 \quad 83 - 7$$

97. Հաշվեք դրավոր.

$$24 + 8 \quad 62 - 8 \quad 29 + 6 \quad 45 - 6$$

$$26 + 6 \quad 42 - 6 \quad 76 + 9 \quad 37 - 8$$

$$47 + 6 \quad 73 - 6 \quad 52 - 4 \quad 85 + 7$$

$$37 + 5 \quad 45 - 8 \quad 86 - 8 \quad 29 + 5$$

98. Հաշվեք բանավոր.

$$38 + 14 \quad 36 - 17 \quad 28 + 47 \quad 44 - 27$$

$$28 + 64 \quad 54 - 16 \quad 36 + 49 \quad 47 - 29$$

$$58 + 34 \quad 63 - 35 \quad 37 + 28 \quad 92 - 34$$

$$28 + 54 \quad 76 - 29 \quad 26 + 66 \quad 85 - 75$$

99. Հաշվեք դրավոր.

$$15 + 27 \quad 63 - 27 \quad 36 + 37$$

$$46 + 37 \quad 56 - 28 \quad 48 + 15$$

$$54 + 29 \quad 85 - 29 \quad 16 + 58$$

$$35 + 38 \quad 92 - 74 \quad 24 + 49$$

100. Աշակերտն իր ունեցած 65 կոպեկից նախաճաշին տվեց 17 կոպեկ, իսկ աշկոռպին՝ 36 կոպեկ զանազան պիտույքների համար. Քանի՞ կոպեկ մնաց նրա մոտ:

101. Յորում գեղատունն այցելեց 83 մարդ, առաջին որը 28, յերկրորդ որը՝ 31, իսկ մնացածն ել՝ յերրորդ որը: Յերրորդ որը քանի՞ այցելու ունեցավ դեղատունը:

102. Գտեք անհայտ թիվը և գրեք տետրում x -ի փոխարեն.

$$x - 24 = 28 \quad 17 + x = 52$$

$$x - 24 = 48 \quad 27 + x = 42$$

$$33 - x = 18 \quad x + 16 = 51$$

$$63 - x = 28 \quad x + 36 = 53$$

103. Կորքան կլինի.

$$52 - 16 + 16 \quad 52 + 14 - 18 \quad 14 + 39 - 48$$

$$84 - 25 + 25 \quad 75 + 17 - 28 \quad 65 - 27 + 37$$

$$66 - 18 + 18 \quad 61 + 26 - 18 \quad 92 - 46 + 17$$

$$72 - 36 + 36 \quad 72 + 15 - 28 \quad 74 + 19 - 46$$

104. Ներքեմի առաջին քառակուսիների թվերը հետզհետե փոքրացրեք և գրեք ձեր տետրում այսպես, ինչպես այստեղ ե:

12-ով՝	96	84					
--------	----	----	--	--	--	--	--

15-ով՝	90						
--------	----	--	--	--	--	--	--

14-ով՝	98						
--------	----	--	--	--	--	--	--

16-ով՝ 96

18-ով՝ 90

105. Թղթից կտրեք մի քանի քառակուսի քարտեր. դրանց վրա գրեք 24 9 18 37 և շարժելով ներքեաի դատարկ քառակուսիների վրայով, գումարեք կողքի թվով:

$$\boxed{} + 7 \quad \boxed{} + 8$$

$$\boxed{} + 26 \quad \boxed{} + 27$$

$$\boxed{} + 38 \quad \boxed{} + 47$$

$$\boxed{} + 59 \quad \boxed{} + 58$$

$$\boxed{} + 43 \quad \boxed{} + 19$$

106. Կտրեք 4 քարտ և դրանց վրա գրեք 70, 86, 77 և 89 և շարժելով ներքեաի դատարկ քառակուսիների վրայով, ամեն անգամ հանեք կողքի թիվը:

$$\boxed{} - 35 \quad \boxed{} - 48$$

$$\boxed{} - 56 \quad \boxed{} - 65$$

$$\boxed{} - 29 \quad \boxed{} - 17$$

$$\boxed{} - 36 \quad \boxed{} - 19$$

$$\boxed{} - 25 \quad \boxed{} - 49$$

107. Յերկու գլուղից դեպի հացամթերման կտրանը ճանապարհեցին սալեր, բարձած ցորենով ու գլազով: Առաջին գլուղի սալերին բարձած եր 24 պարկ ցորեն և 38 պարկ գարի, իսկ յերկոր-

դին՝ 35 պարկ ցորեն և 26 պարկ գարի: Վճրքանով մի գլուղի սալերի հացամթերմանը շատ եր մյուսից:

108. Կոլտնտեսությունն իր մի ակու խաղողը հավաքեց 4 որում.

I	որը կրեցին 18 տակառ խաղող
II	» » 17 » »
III	» » 23 » »
IV	» » մնացածը

Ընդամենը 84 տակառ

Չորրորդ որը քանի՞ տակառ խաղող կրեցին:

109. Կոռուկերատիվը մի վերարկուն վաճառում եր 49 ոռություն, իսկ վերնազգեստը՝ 9 ու պակաս: 100 ոռութիանոցից քանի՞ ոռութի լիւտ կտալին, լիթե գնելին մի վերարկու և մի վերնազգեստ:

ԺԱՄԱՆԱԿԻ ԶԱՓԵՐԸ

Տարիին 12 ամիս եւ:

Ամիսը 30 կամ 31 որ եւ:







Յերեկն ու գիշերը մի լրիվ որ եւ:

Որը 24 ժամ եւ:

Ժամը 60 ըոպե լիւ:

Ռոպեն 60 վալրկան եւ:

110. Նայեցեք ժամացուցիչ նկարներին և սլաքների դիրքով վորոշեք ժամանակը:



111. Թղթից կտրեք ժամացուցի ցիֆերբլատ, պատրաստեցեք մեծ ու փոքր սլաքներ, դասավորեցեք տյնպես, վոր արտահալավի ժամը 5-ը, 7-ից կես անց, 10-ից քառորդ պակաս:

112. Զեր պատրաստած ժամացուցի վրա սլաքները դասավորեք տինպես, վոր ցուց տա—

լեռք են սկսվում ձեր դասերը, լեռք են վերջանում.

Ժամի քանիսին եք պառկում քնելու:

Ժամանակը հաշվում են վոչ միան առավոտյան կտը լերեկուան, գիշերվան ժամերի բաժանելով, այլև հաջորդաբար որվա բոլոր ժամերի անունով—ցերեկվա ժամի 12-ից հետո հետևյալ ժամն անգանելով 13, ապա 14, 15... մինչև 24: Որինակ, փոխանակ տաելուց երեկվա ժամի 2-ը, ասում ենք՝ ժամի 14-ը, լերեկուան ժամի 6-ին ասում ենք՝ ժամի 18:

113. Հաջորդական ժամերով արտահայտեցեք

առավոտյան ժամի 8-ը

ցերեկվա » 3-ը

ցերեկվա » 5-ից կես անց

լերեկուան » 9-ը

գիշերվա » 10-ը

գիշերվա » 11-ից կես պակաս

գիշերվա » 12-ը:

ՀԵՏԱՅՐՔԻ ԱԿԱՆ ՔԱԽԱԿՈՒՄԻՆԵՐ

8	13	12	1
11	2	7	14
5	16	9	4
10	3	6	15

19	26	21
24	22	20
23	18	25

3	2	15	14	1	35	34	4
23	16	1	4	32	6	7	29
10	11	6	7	8	30	31	5
8	5	12	9	33	3	2	36

114. Գումարեցեք այս քառակուսիների ամեն մի շարքի թվերն ուղած ուղղությամբ: Ի՞նչ նկատեցիք:

115. Փարամշակման գործարանում դռան տարբեր մասերը պատրաստելուն գնում է 38 րոպե, մասերը միացնելուն՝ 28 րոպե, իսկ այդ մասերը կացնելուն, տմրացնելուն՝ 9 րոպելով պական, քանի մասերի միացմանը:


Այդ գործարանում վճրքան ժամանակ է պահանջվում մի դուռ շինելու համար:

116. Մեկ վագոնում տեղափորվում է 84 հակ բամբակ: Այդքան բամբակը պահեստից փոխադրեց 3 փուրզոն, վորից II-ը 27 հակ, III-ը՝ նույնքան, իսկ I-ը՝ մնացածը: Այդ 3 փուրզոններից վճրն ամենից շատ տեղափոխեց:

117. Վորքի կարի մեքենան արժե 72 ռ., իսկ ձեռքինը՝ 23 ռուբլով պակաս: Ի՞նչ արժե ձեռքի և վորքի մի-մի մեքենան:

118. Մի կոլտնտեսություն անցյալ տարի ուներ 32 կով և 20 լեզ, իսկ այս տարի՝ 48 կով և 28 լեզ:

Կազմենք դիագրամ, մեկ վանդակն ընդունելով 4 կենդանի:



119. Կազմեք մի խնդիր և արտահայտեցեք դիագրամով:

ՓԱԿԱԳԾՈՎԿ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

$$120. \quad 25 + (24 + 29) \quad 73 - (61 - 37)$$

$$27 + (18 + 43) \quad 81 - (25 + 16)$$

$$9 + (56 + 32) \quad 32 - (94 - 78)$$

$$54 + (23 + 17) \quad 48 - (35 + 9)$$

$$121. \quad (57 - 29) + 43 \quad (49 + 34) - 56$$


$$(76 - 63) + 18 \quad (98 - 39) - 45$$

$$(34 - 26) + 37 \quad (27 + 48) - 39$$


$$(71 - 57) + 65 \quad (87 - 78) + 78$$

ԱՆԿՑՈՒՆՆԵՐ


Վերցրեք լեռկու տափակ քանոն կամ ստվարաթղթի շերտեր, գնդասեղով միացրեք դրանց մի ծալքը, իսկ մյուսն իրար մոտեցրեք կամ հեռացրեք, կստանաք զանազան ձևի անկցուներ:



Առար անկցուն



Ուղիղ անկցուն




Բռոք անկցուն

122. Այսպիսի անկցուններ կտղմեք լուցկիներից:

123. Դասարանում ցուց տվեք սուր, ուղիղ և բութ անկցուն ունեցող իրեր:

124. Տեսրում գծեք մի-մի ուղիղ, սուր և բութ անկցուն, ալսպես.




125. 3 լուցկուց կազմեք 2 սուր անկցուն:

126. 3 լուցկուց կազմեք 2 ուղիղ անկցուն:


127. 3 լուցկուց կազմեք 1 սուր և 1 բութ անկցուն:

128. 3 լուցկին դասավորեք այնպես, վոր միտժամանակ՝ կազմվեք ուղիղ, սուր և բութ արկցուններ:

129. Քառակուսի թուղթը լեռկու անգամ հակառակ ուղղությամբ ծալեք ալսպես:




Այս ծալվածքով քանի՛ և ի՞նչպիսի անկցուններ կազմվեցին: Ուղիղ անկցուն կտառուցելու համար գործածում են ալսպիսի մի գործիք:



Սրան ասում են ուղղանկյունաչափ:

130. Ուղղանկցունաչափի միջոցով գծեք ուղիղ անկցուն:


Շենքեր շինելիս ուղիղ անկցուն կտառուցելու համար գործ են ածում ալսպիսի մի գործիք:



Սա կոչվում է անկցունարդ:

131. Փորձեք աշխատանքի սենյակում փակուց պատրաստեք ալսպիսի մի անկցունարդ:

132. Աղոցեք տախտակն ոգովելով անկունարդից, ինչպես
ցուցի և տալիս նկարը:



ԼՈՏՈՅԻ ԽԱՂ

133. Ներքեմի որինակով, բայց ավելի մեծ դիրքով թղթից պատ-
րաստեցեք քարտեր և դրանց մեջ գրեք բերված թվանշանները:

45 - 18	60 - 43	65 - 19	35 + 28
31 - 18	100 - 45	78 - 69	80 - 64
35 + 29	58 + 34	28 + 28	71 - 59
57	9	27	64
17	22	46	92
16	63	19	56

Վերցրեք լուրաքանչյուրդ 3-ական քարտ և մեկ-մեկ հանելով
քառակուսի թերթիկները, խաղացեք լոտո:

134. Դպրոցական շենք ելին շինում. 18 բանվոր քար եր կրում,
8-ը՝ ցեխ հասցնում, իսկ քար կրողներից 8-ով ավելին՝ ուրիշ աշ-
խատանքներ կատարում: Քանի՞ բանվոր եր աշխատում շենքի կա-
ռուցման վրա:

135. Քաղաքում մի բաղնիս շինեցին, վորի համարների թիվը

48 եր, ընդհանուր լողաբաններին՝ 4, իսկ համարներից ու լողաբան-
ներից 39 սենյակով պակաս՝ գրասենյակի և այլ կարիքների համար:
Քանի՞ սենյակից եր բաղկացած բաղնիսը:

136. Հաշվեցեք գրավոր.

$$63 + (4 \times 5) \quad 63 - (4 \times 5) \quad (10 \times 3) + 28$$

$$38 + (7 \times 2) \quad 38 - (7 \times 2) \quad (4 \times 10) + 16$$

$$45 + (10 \times 3) \quad 45 - (10 \times 3) \quad (3 \times 20) + 36$$

$$56 + (6 \times 3) \quad 56 - (6 \times 3) \quad (2 \times 9) + 25$$

$$137. (20 \times 4) - 28 \quad 55 + (40 : 2) \quad 55 - (40 : 2)$$

$$(30 \times 3) - 37 \quad 64 - (60 : 2) \quad 64 - (60 : 2)$$


$$(20 \times 5) - 46 \quad 48 + (18 : 2) \quad 48 - (18 : 2)$$

$$(40 \times 2) - 75 \quad 74 - (18 : 4) \quad 74 - (18 : 3)$$

$$138. (60 : 6) + 19 \quad (60 : 3) - 8$$

$$(80 : 8) + 27 \quad (100 : 5) - 14$$

ՅԵՐԿԱՆՈՒՆ ԱՆՎԱՆԱԿԱՆ ԹՎԵՐԻ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ ՅԵԿ ՀԱՆՈՒՄԸ



Մեր խմբի մէ քանի աշակերտների հասակը:

	այժմ	անցյալ տարի
Ազիզան Եմմա	1 մետր 24 սանտ.	1 մետր 19 սանտ.
Սելյանյան Կարլեն	1 » 27 »	1 » 21 »
Գոսպարյան Նինել	1 » 28 »	1 » 23 »
Սարգսյան Նարիա	1 » 24 »	1 » 17 »
Դարբինյան Սերժիկ	1 » 22 »	1 » 17 »
Անդրիասյան Սուրյիկ	1 » 26 »	1 » 20 »

139. Հաշվեք, թե մի տարում ի՞նչքան ե ավելացել ամեն մեկի հասակը:

140. Զափեք ձեր խմբի աշակերտների հասակը:

Մետրը	կրծտու գրում են մ
Դեցիմետրը	» » » դմ
Սանտիմետրը	» » » սմ

141. Գրեք իրար տակ և հաշվեք.

1 դմ 7 սմ + 3 սմ	4 մ 7 սմ + 1 մ 2 սմ
2 դմ 7 սմ + 5 սմ	3 մ 5 դմ + 4 մ 9 դմ
5 դմ 4 սմ + 8 սմ	6 մ 4 սմ + 7 մ 7 սմ
1 մ 3 դմ + 2 մ 4 դմ	5 մ 6 դմ + 3 մ 2 դմ

142. 1 մետր 28 սմ յերկարության քանոնը համեմատեք 1 մետր 24 սմ քանոնի հետ:

Հաշվեք, թե առաջինը յերկրորդից ի՞նչքանով ե մեծ:

143. 2 մետր 30 սմ ձողից կտրեք 1 մետր 10 սմ, ի՞նչ յերկարության ձող մնաց:

144. Դասարանի յերկարությունը՝ 7 մ 25 սմ ե, իսկ լայնությունը՝ 4 մ 10 սմ: Յերկարությունն ի՞նչքանով ե ավելի լայնությունից:

145. Գրեք իրար տակ և հաշվեք.

2 մ 25 սմ — 1 մ 14 սմ	4 մ 50 սմ — 2 մ 24 սմ
8 մ 39 սմ — 2 մ 23 սմ	9 մ 35 սմ — 4 մ 22 սմ
7 մ 46 սմ — 5 մ 52 սմ	6 մ 18 սմ — 5 մ 19 սմ

146. Աշակերտը գպրոցում աշխատում ե 4 ժամ 4 րոպե, իսկ տանը՝ 2 ժամ 30 րոպե: Վիճակն ե աշխատում աշակերտը դպրոցում և տանը:

147. Աշակերտներն արհեստանոցում 1 ժամ 20 րոպե կազի աշխատանք կատարեցին և 1 ժամ 45 րոպե վայտի աշխատանք: Վիճակն ժամանակ աշխատեցին արհեստանոցում:

148. Գրեք իրար տակ և հաշվեք.

1 ժամ 15 րոպե + 45 րոպե
3 ժամ 45 րոպե + 35 րոպե
2 ժամ 30 րոպե + 50 րոպե
1 ժամ 30 րոպե + 2 ժամ 30 րոպե
3 ժամ 10 րոպե + 5 ժամ 20 րոպե
1 ժամ 50 րոպե + 7 ժամ 45 րոպե
2 ժամ 45 րոպե + 1 ժամ 15 րոպե
2 ժամ 25 րոպե + 4 ժամ 25 րոպե
6 ժամ 55 րոպե + 4 ժամ 10 րոպե:

149. Առաջին և յերկրորդ խմբերն աշխատանքի սենյակում աշխատեցին 2 ժամ 45 րոպե: առաջին խումբն աշխատեց 1 ժամ 15 րոպե: Ի՞նչքան աշխատեց յերկրորդ խումբը:

150. Գրեք իրար տակ և հաշվեք.

1 ժամ 20 րոպե — 15 րոպե
1 ժամ 55 րոպե — 30 րոպե
1 ժամ — 40 րոպե
2 ժամ — 1 ժամ 25 րոպե
5 ժամ 15 րոպե — 2 ժամ 5 րոպե
2 ժամ — 1 ժամ 15 րոպե
5 ժամ 40 րոպե — 2 ժամ 10 րոպե
3 ժամ 25 րոպե — 1 ժամ 20 րոպե
2 ժամ 20 րոպե — 1 ժամ 40 րոպե

151. Դպրոցի աշկոռպից II խմբի համար վերցրին 35 տեսք 1 ոռելի 75 կոպեկով և 35 թանաքաման 1 ոռելի 75 կոպեկով: Ի՞նչքան գնարեցին բոլորին:

152. Դպրոցի արհեստանոցի համար ոտացան սղոց 1 ոռելի 70 կոպեկովությունը և մուրճ՝ 40 կոպեկով սղոցից պակաս: Ի՞նչ արժեքը մուրճը:

153. Գրեք իրար տակ և հաշվեք.

- | | | | | | |
|-----------------|---|-------------|-------------|---|-------------|
| 1 ոռւբ. 80 կոպ. | + | 3 ո. 20 կ. | 16 ո. 60 կ. | + | 5 ո. 30 կ. |
| 3 ոռւբ. 25 կոպ. | + | 10 ո. 55 կ. | 5 ո. 29 կ. | + | 8 ո. 71 կ. |
| 4 ոռւբ. 15 կոպ. | + | 2 ո. 15 կ. | 4 ո. 56 կ. | + | 13 ո. 19 կ. |

154. 25 ոռւբ. 80 կոպ. + 7 ոռւբ. 18 կոպ.

66 ոռւբ. 65 կոպ. + 6 ոռւբ. 27 կոպ.

36 ոռւբ. 29 կոպ. + 18 ոռւբ. 42 կոպ.

26 ոռւբ. 83 կոպ. — 15 ոռւբ. 76 կոպ.

54 ոռւբ. 45 կոպ. — 16 ոռւբ. 18 կոպ.


63 ոռւբ. 78 կոպ. — 27 ոռւբ. 57 կոպ.

155. Կազմեք խնդիրներ, նյութերը վերցնելով աշկոռպից, արհեստանոցից և ձեր կլանքի ուրիշ շրջաններից:

ԲԱ ԶՄԱՊԱՏԿՈՒՄ ՅԵՎ ԲԱԺԱՆՈՒՄ

ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ 10-Ը

1. Հաշվեք՝ ամեն մի շարքում քանի կոպեկ եւ:



2. Գրեք տեսրում կարճ ձևով արագես ու հաշվեք:

10×1	10×6
10×2	10×7
10×3	10×8
10×4	10×9
10×5	10×10

3. 10×2

10×4

10×6

10×8

10×3

10×5

10×7

10×9

4. Մատիսն արժե 10 կոպեկ քանի՞ կոպեկ պետք է վճարել

10 մատիսին:



5. Աշակերտը փոստից 8 հատ

գնեց. ի՞նչքան
վճարեց:

6. Մի դեցիմետրը 10 սանտիմետր է. 7 դեցիմետրը քանի՞ սանտիմետր է:

7. 10 թերթից կազմված 5 տետրը քանի՞ թերթ ունի:

8. Կազմեք խնդիրներ, վորտեղ 10 կրկնվի 3, 6, 4, 9 անգամ:

9. $(10 \times 2) + 10$ $(30 - 20) \times 4$ $(10 \times 6) - 10$

$(10 \times 7) + 15$ $(30 - 20) \times 10$ $(8 + 2) \times 10$

$(10 \times 9) - 30$ $(4 + 6) \times 3$ $(10 \times 9) + 10$

$(10 \times 8) - 60$ $(7 + 3) \times 5$ $(70 - 60) \times 6$

10. Գնացքի առաջին վագոնում կար 30 ձանապարհորդ, յերկուրդում առաջինից 20-ով պակաս, իսկ յերրորդում յերկորդից 4 անգամ ավելի: Յերրորդ վագոնում քանի՞ ձանապարհորդ կար:

11. Նոր կառուցվող շենքի լայնությունը 10 մետր էր, յերկուրդունը 3 անգամ ավելի, իսկ բարձրությունը 19 մետրով պակաս յերկարությունից: Վորքան եր բարձրությունը:

ԲԱԺԱՆԵԼ 10-Ի

12. 20 Գրչածալը 10 աշակերտի միջև բաժանեք հավասարապես, ամեն մեկը քանի՞ով ստացավ:

13. 30 հատ կոպեկանոց վերցրեք և հավասար բաժանեք 10 մեղ. ի՞նչքան ստացաք:

14. 50 ոռոբլիմանոցը փոխարինեք 10 ոռոբլիմանոցներով: Քանի՞ 10 ոռոբլիմանոց կլինի:

15. 80 կոպեկով քանի? 10 կոպեկանոց նամակադրոշմ կարելի լի գնել:

16.	$10 : 10$	$80 : 10$	$100 : 10$	$30 : 10$
	$20 : 10$	$90 : 10$	$90 : 10$	$20 : 10$
	$30 : 10$	$100 : 10$	$80 : 10$	$10 : 10$
	$40 : 10$	$20 : 10$	$70 : 10$	$90 : 10$
	$50 : 10$	$40 : 10$	$60 : 10$	$70 : 10$
	$60 : 10$	$60 : 10$	$50 : 10$	$50 : 10$
	$70 : 10$	$80 : 10$	$40 : 10$	$100 : 10$

17. 10 գործվածքալին մեքենալի հարկավոր և որական 40 կիլոգրամ մանվածք. մի մեքենան որական քանի? Կիլոգրամ մանվածք և սպառում:


18. Մի կիլոգրամ մանվածքից ստացվում է 10 մետր գործվածք. քանի? Կիլոգրամ մանվածք և հարկավոր 100 մետր գործվածք ստանալու համար:

19. 80 կոլանտեսական դաշտ գուրս յեկան բամբակ հավաքելու, նրանք բաժանվեցին 10 բբիգադի: Ամեն մի բբիգադում քանի՞սն ելին:

20. $(20 : 10) + 10$ $(30 : 10) + 20$ $(70 : 10) - 5$
 $(10 \times 7) : 10$ $(40 + 60) : 10$ $(85 - 25) : 10$
 $(80 : 10) + 5$ $(50 : 10) + 5$ $(90 : 10) + 10$
 $(10 \times 5) : 10$ $(70 + 20) : 10$ $(75 - 15) : 10$

21. Հին գործվածքալին մեքենալի վրա ջուլհակը մի ժամում գործում եր 10 մետր չիթ, իսկ նորի վրա՝ 50 մետրով ավելի: Նոր մեքենալով քանի՞ անգամ ավելի լի գործում:

22. Կողմանտկենտրոնը բաց թողեց կողմանտեսություններին 50 տրակտոր, դրանից 10 անգամ պակաս սերմազտիչ մեքենա և վերջինից 2 անգամ ավելի շարքացան։ Քանի՛ մեքենա բաց թողեց կողմանտկենտրոնը։



23. Խնդիր-հանելուկ. - Աշակերտն իր ընկերոջը հարցրեց — «Քանի՛ գրչածալը ունես»։ Նա պատասխանեց — «Եթե ունենալի 10 անգամ ավելի, քան հիմա ունեմ, ապա 30 հատ գրչածալը կունեալի»։ Քանի՛ գրչածալը ուներ։

24. Տետրում մի գեցիմետր նկարեք և բաժանեք սանտիմետրների։

Քանի՛ սանտիմետր ունի գեցիմետրը։

Մի սանտիմետրը գեցիմետրի վեր մասն ե կոտզմում։

Մեկ տասնորդականը գրվում ե ալսպես $\frac{1}{10}$ ։

Քանի՛ $\frac{1}{10}$ մաս ունի գեցիմետրը։

25. Տետրում նկարեք 1 գեցիմետր լերկարություն ունեցող ուղղանկյուն և քանոնի ոգնությամբ բաժանեք 10 հավասար մասի, այսպես

$\frac{1}{10}$									
----------------	----------------	----------------	----------------	----------------	----------------	----------------	----------------	----------------	--

Չդրածը վեր մասն ե, Քանի՛ ալսպիսի մաս ունի ուղղանկյունը՝ $\frac{1}{10}$ մասն ստանալու համար պետք ե բաժանել 10 հավասար մասերի։

26. Գորեք $40\text{-}ի$ $\frac{1}{10}$ մասը։

27. Գորեք $70, 90, 50, 30\text{-ի}$ $\frac{1}{10}$ մասը։

28. 8-ը 80-ի վեր մասն ե։

29. Աշակերտն իր ունեցած շո կոպճկը $\frac{1}{10}$ մաւը ավել թողեց, իսկ հատթածի $\frac{1}{10}$ մաւով եւ գըշտանալը առավ։ Քանի՛ կոպճկի գըշտածը առավ։


30. Կողմանտեսությունը ցանեց 15 ցմնտներ գարի, դրանից 35 ցենտներով ավելի՝ ցորեն և այդ լերկուոփի $\frac{1}{10}$ -ի չափ ել հաճաղ։ Քանի՛ ցենտներ հաճար ցանեց։

31. Դպրոցի պարտեզում կար 75 ծիրանի, 15-ով պակաս խընձորենի և խնձորենիների $\frac{1}{10}$ մասի չափ ել տանձենի։ Քանի՛ տանձենի կար։

$$\begin{array}{llll} 32. \quad x \times 10 = 20 & x : 10 = 3 & 30 = 10 \times x \\ x \times 10 = 40 & x : 10 = 5 & 10 = 60 : x \\ x \times 10 = 60 & x : 10 = 7 & 90 = 10 \times x \\ x \times 10 = 80 & x : 10 = 9 & 10 = x : 10 \\ x \times 10 = 100 & 20 : x = 10 & 80 = x \times 10 \\ 10 \times x = 30 & 40 : x = 10 & 10 = 70 : x \\ 10 \times x = 50 & 60 : x = 10 & 40 = x \times 10 \\ 10 \times x = 70 & 80 : x = 10 & 10 = 50 : x \\ 10 \times x = 90 & 100 : x = 10 & 70 = 10 \times x \end{array}$$

ԲԱԶԱՐԱՑԿԱՄԱՆ ՅԵՎ ԲԱԺԱՆՄԱՆ ԽԱՂ

33. Կորեք թղթից մի ուղղանկյունի և խավաքարտին փակցնելով՝ վրան գրեք ալսպես $10 \times$. Կորեք ելի 9 հատ քառակուոփ ու խավաքարտին փակցնելով՝ վրաները գրեք ալսպես 2 . 3 4 մինչև 10 . Լորեք մի քսակի կամ տուփի մեջ։



Եք սեղանին և տուփը կամ քսակը տալիս մեկին, վորն առանց նայելու հանում ե մեկ-մեկ և բարձր ձայնով հայտնում հանած թիվը: Մյուսներից հերթով մեկն ասում ե, թե ի՞նչ թիվ կատացվի, յեթե 10-ը բազմապատճենք հանած թվով: Բոլոր ընկերները լուս հետեւում են. յեթե պատասխանը ճիշտ չի լինում, պատասխանողը համարվում է տարված ու քսակը արվում ե նրան, վորպեսզի նա հանի թվերը: Իսկ յերբ վոչ վոք չի տարվում, հերթով են հանում մի լրիվ պտույտից հետո: Նույն ձևով խաղում եք բաժանման խաղը, միայն ուղղանկան վրա գրում եք $\boxed{: 10}$, իսկ քառակուսին ների վրա $\boxed{20}$ $\boxed{30}$ $\boxed{40}$ $\boxed{\text{մինչև}} \boxed{100}$

ԲԱԶՄԱՊԱՏՃԵԼ 5-Ը

34. Համբիչի վրա հաշվեք հնգյակներով:


35. Հաշվեք 5 կոպեկանոցներով. քանի՞ կոպեկ ե 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10:



36. Հաշվեք հնգյակներով այսպես՝ 5, 10, 15 մինչև 100-ը: Գրեք այդ թվերը:

37. Յետ հաշվեք հնգյակներով այսպես՝ 100, 95, 90 մինչև 5-ը: Գրեք այդ թվերը:

38. Նկարեք մի քառակուսի, վորի ամեն մի կողմը լինի 5 սանտիմետր. ձախից-աջ և վերևից-ներքև բաժանեք քառակուսին 5 հավասար մասերի այսպես.—



Հաշվեք՝ քանի՞ շարք քառակուսիներ ստացաք:

Քանի՞ քառակուսի կա մի շարքում, 2, 3, 4, 5 շարքում:

Հինգ շարքում կա

$$5 + 5 + 5 + 5 + 5 \\ 5 \times 5$$


Վորն ե հեշտ ու կարճ գրվում, գումարնան թե՛ բազմապատկման գործողություննը:

39. Վերևի քառակուսուն նայելով 5×4 արտահայտեցեք ուղղանկունով:

$$\begin{array}{llll} 40. & 5 \times 1 & 20 + 5 & 30 + 5 \\ & 5 \times 2 & 5 \times 5 & 5 \times 7 \\ & 5 \times 3 & 25 + 5 & 35 + 5 \\ & 5 \times 4 & 5 \times 6 & 5 \times 8 \\ & & & 5 \times 10 \end{array}$$

41. Այգում ծառերը տնկված են շարքերով. ամեն մի շարքում 5-ական. քանի՞ ծառ կա 3 շարքում 4, 6, 9 շարքում:

$$\begin{array}{lll} 42. & 4 \text{ հատ } 5 \text{ սուրլիանոցը } & \text{քանի՞ ոռոբի յե.} \\ & 5 \times 2 & 5 \times 3 \\ & 5 \times 4 & 5 \times 5 \\ & 5 \times 6 & 5 \times 7 \end{array}$$



43. Մի կապը 3 պահունակ ունի, իսկ պահունակը՝ 5 փամփուշտ. քանի՞ փամփուշտ ե մի կապը:

44. Աշակերտի Պայմ-Ավիաքիմի անդամագրքություն փակցված եր 8 հատ 5 կոպեկանոց դրոշմանից Վառքան եր մարել:

$$\begin{array}{lll} 45. (5 \times 6) + 20 & (15 - 10) \times 5 & (5 \times 10) - 40 \\ (5 \times 8) - 20 & (7 + 3) \times 5 & (5 \times 7) - 30 \\ (5 \times 2) \times 4 & (5 \times 2) \times 5 & (60 - 50) \times 5 \end{array}$$

46. Դպրոցի IV խմբի աշակերտները վերացրին 5 մարդու մաքրագիտություն, իսկ V խմբի աշակերտները դրանից 3 անդամ ավելի: Յերկու խմբերը միասին քանի մարդու անդրագիտություն վերացրին:

47. Մեկն ուներ 7 հատ 5 ոռովլիանոց. 20 ոռովլին ծախսեց: Ի՞նչքան փող մնաց մոտը:

ԲԱԺԱՆԵԼ 5-Ի

48. 40 կոպեկը հավասար բաժանեք 5 աշակերտի. վորքան ստացավ ամեն մեկը:

49. 50 լորու հատիկ հավասարապես տեղավորեք 5 լուցկու դատարկ տուփերում. ամեն մի տուփում քանի հատ ստացաք:

50. 35 կոպեկով քանի 5 կոպեկանոց նամակադրոշն կարելի լեզնել:

51. Քանի 5 ոռովլիանոցով կարելի լե փոխարինել 10, 20, 50 ոռովլիանոցը:

$$\begin{array}{cccc} 52. \begin{matrix} 5 : 5 & 30 : 5 & 50 : 5 & 45 : 5 \\ 10 : 5 & 35 : 5 & 40 : 5 & 35 : 5 \\ 15 : 5 & 40 : 5 & 30 : 5 & 25 : 5 \\ 20 : 5 & 45 : 5 & 20 : 5 & 15 : 5 \\ 25 : 5 & 50 : 5 & 10 : 5 & 5 : 5 \end{matrix} \end{array}$$

53. Կոլտնտեսությունը 5 կոլտնտեսության հավասարապես բաժանեց 50 ազնվացեղ խոզ: Ամեն մի կոլտնտեսություն քանի խոզ ստացավ:

54. Մեքենատրակտորալին կայտնն իր ունեցած 20 տրակտորներն ուղարկեց մոտակա 5 գլուղերի կոլտնտեսություններում հավասարապես աշխատելու: Ամեն մի կուլտնտեսության քանի տրակտոր գնաց:

55. Տրակտորը 5 ժամում 10 կիլոգրամ բենզին և ալրում: Մի ժամում քանի կիլոգրամ բենզին և ալրում:

56. Մի կիլոգրամ բըդից կարելի լե գործել 5 զուգ կանացի գուշպա: Քանի կիլոգրամ բուրդ և հարկավոր 45 զուգ գուշպա: Համար:

57. Կողմեք խնդիրներ, վորտեղ 25, 15, 40, 35 բաժանված լինի 5-ի վրա:

58. Տետրում գրեք 5-ից մինչև 50-ը 5-ի բաժանվող բոլոր թվերը:

$$\begin{array}{lll} (20 : 5) + 10 & (5 \times 9) : 5 & (5 \times 5) : 5 \\ (50 : 5) - 5 & (25 + 15) : 5 & (5 : 5) \times 5 \\ (25 : 5) \times 5 & (50 - 25) : 5 & (5 + 5) : 5 \end{array}$$

59. Մի բանվորական շենքի կառուցման վրա աշխատում ելին 25 վորմագիրը, 5 անգամ պակաս հոււսն և հոււսներից 3 անգամ ավելի քարտաշ: Քանի քարտաշ եր աշխատում:

60. Փախամշակման գործարանի լուրաքանչյուր բանվոր պատրաստի մասներից պլանով պիտի պատրաստեք ամսական 45 պահարան: Լուրաքանչյուր հարվածային բանվոր պատրաստեց 5-ով ավելի: Ամեն մի վեցորդակում հարվածային բանվորը քանի պահարան պատրաստեց:

61. Բոստովի գյուղատնտեսական մեքենաշինարարական գործարանում ամեն մի 5 ըոպելում պատրաստում են 10 զութան. $\frac{1}{2}$ ժամում քանի զութան են պատրաստում:

62. Մի թիվ վերցրի մտքումս և շազմապատկելով 5-ով ստացա իմացեք՝ ի՞նչ թիվ ելի վերցրել:

63. Մի թիվ վերցրի մտքումս և բաժանելով 5-ի ստացա 10. իմացեք՝ ի՞նչ թիվ ելի վերցրել:

ԱՆՀԱՅՑ ԹԻՎԸ ԳՏՆԵԼՈՒ ԽԱՂ

Խաղում են ալպես.—մեկը նստում ե կենտրոնում, իսկ մյուսները նրա շուրջը շրջան են կազմում. կենտրոնում նստածն առաջարկում ե շրջանի լուրաքանչյուր ընկերոջը հերթով.—

- Մի թիվ վերցրու:
- Վերցրի:
- 5-ը բազմապատկեր այդ թվով:
- Բազմապատկեցի:
- Ի՞նչքան ստացար:
- 30:

— Քո վերցրած թիվը 6 եր, Յեզ ալսպես շարունակում են, պարմանով, վոր վերցրած թիվը մեծ չլինի 10-ից և միշտ ել առաջարկվում է 5-ու բազմապատկել վերցրած թվով: Ճիշտ չփորոշելու



դեպքում կենարոնում նստածն անցնում է շրջան, իսկ մի ուրիշ փոխարինում է նրան: Նույն ձևով խաղում եք բաժանման խաղը պարմանով, վոր վերցրած թիվը 5-ից պակաս և 50-ից ավել չլինի և 5-իվա բաժանվող լինի: Լավ խաղալու համար նախ գտեք այս որինակներում անհայտ թիվը.

$$5 \times x = 10 \quad x : 5 = 10$$

$$5 \times x = 20 \quad x : 5 = 8$$

$$5 \times x = 30 \quad x : 5 = 6$$

$$5 \times x = 40 \quad x : 5 = 4$$

$$5 \times x = 50 \quad x : 5 = 2$$

$$5 \times x = 15 \quad x : 5 = 3$$

$$5 \times x = 25$$

$$5 \times x = 35$$

$$5 \times x = 45$$

$$x : 5 = 5$$

$$x : 5 = 7$$

$$x : 5 = 9$$


ԲԱԶՄԱՊԱՏԿԵԼ 4-Ի

65. Հաշվեք՝ ավելացնելով 4 ալսպես 4, 8, 12... մինչև 100:

66. Գրեք տետրում 4, 8, 12... մինչև 100:

67. Հաշվեք՝ հանելով 4 ալսպես 100, 96, 92... մինչև 1:

68. Գրեք տետրում 100, 96, 92... մինչև 4:
69. Հաշվեք՝ քանի թանաքանան կա մի շարքում, 2, 3, 4, 5, 6, 7, 8, 9, 10 շարքում:



70. 4×1 4×4
 $4 + 4$ $4 + 4 + 4 + 4 + 4$
 4×2 $(4 \times 2) + (4 \times 3)$
 $4 + 4 + 4$ 4×5
 4×3 $4 + 4 + 4 + 4 + 4 + 4$
 $4 + 4 + 4 + 4$ $(4 \times 2) + (4 \times 2) + (4 \times 2)$
 $(4 + 4) + (4 + 4)$ $(4 \times 3) + (4 \times 3)$
 $(4 \times 2) + (4 \times 2)$ 4×6
 $(4 \times 3) + (4 \times 4)$
 4×7
 $(4 \times 4) + (4 \times 4)$
 4×8
 $(4 \times 4) + (4 \times 5)$
 4×9
 $(4 \times 5) + (4 \times 5)$
 4×10

71. Հնտանիքը գեկագում սպառում է 4 կիլոգրամ նազմակ. վորքան կապառի մի ամսում, 2, 3 ամսում:

72. Շենքի համար գործադրվող աղջուակի քաշը 4 կիլոգրամ է. բանվորը տեղափոխում է 10 լազուա: Քանի կիլոգրամ ծանրություն է վերջնում:

73. Զին քաշում եւ սալակը 5 պարկ ալյուրով, իսկ բեռնատար ավտոն 8 անգամ ավելի: Քանի պարկ ալյուր եւ տեղափոխում բեռնատար ավտոն:

$$74. (4 \times 5) + 15 = (4 \times 6) + 35 = (4 \times 3) + 27 = (4 \times 7) - 19 = (15 - 11) \times 4 = (90 - 86) \times 8 = (4 \times 2) + 22 = (4 \times 4) + 4 = (5 \times 2) \times 4$$

75. Վագոնում չորս-չորս նստելու 9 նստարան կտր: 45 մարդ եր տեղափորված: Քանի սն ելն կանգնած:

76. Յերրորդ վճռական տարվա փոխառության տոմսեր գնեցին. I խումբը 10 սուբլու, II-ը՝ 4 անգամ ավելի I-ից, իսկ III-ը՝ 40 սուբլով ավելի II-ից: Քանի սուբլու տոմս գնեց III խումբը:

ԲԱԺԱՆԵԼ 4-Ի

77. 12 մատիտը բաժանեք 4 աշակերտի: Քանի մատիտ ստացակ ամեն մեկը:

78. Գիրքը 20 կոպեկ արժե, իսկ տետրը՝ 4: Քանի անգամ գիրքը թանգ արժե տետրից:

79. 32 պիոներ չորս-չորս շարք կանգնեցին. Քանի շարք ստացվեց:

$$80. \begin{array}{llll} 4 : 4 & 4 \times 5 & 32 : 4 & 16 : 4 \\ 4 \times 2 & 20 : 4 & 4 \times 9 & 8 : 4 \\ 8 : 4 & 4 \times 6 & 36 : 4 & 36 : 4 \\ 4 \times 3 & 24 : 4 & 4 \times 10 & 28 : 4 \\ 12 : 4 & 4 \times 7 & 40 : 4 & 20 : 4 \\ 4 \times 4 & 28 : 4 & 32 : 4 & 12 : 4 \\ 16 : 4 & 4 \times 8 & 24 : 4 & 4 : 4 \end{array}$$

81. Ցեմենտից և ավաղից շաղախ պատրաստելու համար 1 պարկ ցեմենտի հետ խառնում են 4 պարկ ավաղ: 20 պարկ ավաղի հետ քանի պարկ ցեմենտ պետք եւ խառնել:

